

զանի խոսքը, նրա լեզվում ու ոճը՝ հասել է արվեստի բարձր կատարելության ու վարպետության: Նրա հանճարեղ գրչի տակ հայ պոետական արվեստը և, ընդհանրապես, գեղարվեստական խոսքը զարգացել է՝ հասնելով նոր աստիճանի:

Բազմազան ու բազմաժանր է Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը: Լիրիկական բանաստեղծություն, էպիկական պոեմ, լիրիկական պոեմ, առակ, լեգենդ, բալլադ, արձակ էջեր, հոբելանս — ահա դրական խոսքի այն տեսակներն ու ժանրերը, որոնք կան Իսահակյանի ստեղծագործության մեջ:

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը, մասնավորապես պոեզիան, ունի գաղափարական և գեղարվեստական մեծ արժանիքներ: Ժողովրդի հարազատ արվեստագետի պոեզիան գեղեցիկ է, հուզիչ և հմայիչ, ունի բարձրարվեստ տաղաչափություն, որը բազմազան է և հարուստ՝ երաժշտականությամբ:

Ավետիք Իսահակյանի մեծահարուստ և բազմաբովանդակ ստեղծագործությունը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանի՝ միջնադարական և սովետական: Ստեղծագործության առաջին շրջանի գործերում Իսահակյանը ընդգրկել է մարդու հոգեկան աղիսարճը, երգել է սերը, երգել է մեծ խորությամբ ու զգացմունքով: Միաժամանակ,

նա վերարտադրել է սոցիալական անհավասարությունը, «աշխարհիս մեջ գոյություն ունեցող շարիքը», աշխատավոր ժողովրդի կրած տառապանքը, քննադատել է ժամանակակից ծանր իրականությունը, տառապել է իր սիրելի ժողովրդի ճակատագրի համար և երազել նրա, ինչպես և ողջ մարդկության լավագույն ապագայի մասին:

Ավետիք Իսահակյանի ստեղծագործական նոր շրջանը սերտորեն կապված է Հայաստանի սովետական շրջանի հետ: Նա ավագ սերնդի այն գրողներից էր, որ հաստատուն կանգնեց սովետական դրականության դիրքերում և իր գրչով պայքարում է հօգուտ իր ծաղկող Սովետական Հայրենիքի, որին նա սիրում է իր հոգու ամբողջ խորությամբ:

Ավետիք Իսահակյանը, մեր լուսապայծառ ապագայի ցուրը իր իմաստուն ու խորթաբանաց աչքերի մեջ, պիտի լորեն մասնակցում է մեր վերածնված ժողովրդի գրական և կուլտուրական կյանքին: Իսահակյանը իր ուժերը չի խնայում ժողովուրդների միջև խաղաղությունը և համերաշխությունը ամրապնդելու սրբազան գործի հաջողության համար:

Ստեղծագործական նոր եռանդ, նոր հաջողություններ ենք ցանկանում բոլորից սիրված, բոլորից հարգված հայրենասեր Մեծ Վարպետին:

Մ. Է.

## Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

Լենինի պողոտայի ծալքին, Կոնդի սարալանջին բարձրանում է մի գողտրիկ շենք, մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանն է: Տուն-թանգարանի հիմնապատը բավական բարձրություն ունի և շարված է բազալտի հղկած քարերից:

Հիմնապատի կենտրոնում, աստիճանների դիմաց, պատի միջից բխում է սառնորակ մի աղբյուր: Այս աղբյուրը, ավազանը, գեղեցիկ աստիճանները և նրանց շրջապատող սաղարթախիտ ալգին, առհասարակ շենքի դիրքն ու այս սարալանջը հիշեցնում են Լոռու չքնադագեղ ձորը: Կարծես Լոռուց մի բեկոր կտրել և բերել են այստեղ:

Աղբյուրի մոտից, շենքի հիմնապատից աջ և ձախ փոփել է լայն հարթավայր, եզրափակված շուգունի գեղեցիկ բազրիքով: Ենթի առաջին հարկը մնում է հարթակի տակ:

Հարթակի կենտրոնական մասում բացվում է շենքի շքամուտքը՝ շրջապատված զարդաքանդակների գեղեցիկ ժանգվենով:

Քանդակած փայտյա դուռը գրավում է այցելուի ուշադրությունը:

Կենտրոնական մուտքի աջ և ձախ կողմերից զույգ-զույգ հսկա սյուներ են բարձրանում: Նրանց խոյակների վրա հաղթական կերպով բարձրանում է մի հսկա կամար՝ զարդարված զարդանկարներով ու զարդաքանդակներով: Զույգ սյուներից այն կողմ դարձյալ սյուներ են բարձրանում ու իրենց խոյակների վրա կամարներ պահում: Կամարների այս խոյակը կազմում է Թումանյանի տուն-թանգարանի հիմնական ճակատը, այն ճակատը, որը սարալանջից հպարտորեն նայում է դեպի Լենինի պողոտան, որ կարծես սկիզբ է առնում նրանից և ձգվում հեռու:

Որք մենք հարթակի վրա էինք, մեր դեմահանդիման, կենտրոնական մուտքի առջև դուրս եկավ Թումանյանի տուն-թանգարանի նախազծի հեղինակ, երիտասարդ ճարտարապետ Գրիգոր Աղաբաբյանը:

Նա մեզ ներս հրավիրեց:

— Շուտով կվերջանան քարային աշխատանքները, և մեծ բանաստեղծի տուն-թանգարանը պատրաստ կլինի Հայաստանում Մովսեսի կարգեր հաստատելու երեսնամյակին, — չապասելով մեր հարցին հայտնեց ճարտարագետը և ապա շարունակեց.

— Բանաստեղծի տուն-թանգարանը, ինչպես տեսնում եք, եռահարկ է: Առաջին հարկը ծառայելու է որպես ապաստարան, այսպիսի ապաստարաններ ունեն բոլոր թանգարանները: Երկրորդ հարկում կընկվեն բանաստեղծի այրին և բարեկամները: Իսկ երրորդ հարկում կցուցադրվեն տուն-թանգարանի էքսպոնատները:

Հետո նա ծանոթացրեց տուն-թանգարանի ներքին կահավորմանը:

— Այս պատշգամբի պատերին յուզաներկով կնկարվեն լուռու պելլագոսները, կդրվեն զանազան իրեր ու դիմանկարներ: Իսկ ներքևում, կենտրոնական մուտքի աջ և ձախ մասերում, ողորկ պատերի վրա, հսկա սյուների միջև կկորագրվեն Քոմանյանի ատվթիկները:

Այս սենյակը Քոմանյանի ննջարանն է. այստեղ կդրվեն այն բոլոր իրերը, որ ունեցել է նա Քիֆլիսում եղած ժամանակ: Իսկ այս մյուս սենյակը հյուրասենյակն է: Այս սրահում էլ, — շարունակում է ճար-

տարագետը, — կցուցադրվեն Քոմանյանի գրքերի տարբեր հրատարակությունները՝ նախասովետական շրջանից մինչև մեր օրերը: Այստեղ կդրվեն սեղաններ, ցուցափեղկեր, մեծ բանաստեղծի հետ առնչություն ունեցող գրողների, հասարակական մյուս գործիչների, ծնողների և այլ մարդկանց դիմանկարներ, բանաստեղծին վերաբերող գրքեր և զանազան նկարներ, մի խոսքով՝ այն ամենը, ինչ որ կապված է նրա կյանքի ու գրական-հասարակական գործունեության հետ:

— Ես եղա Քիֆլիսիում, — վերջում այնչափացրեց ճարտարագետը, — ուսումնասիրեցի Քոմանյանի «Վերնատուն»-ը, ուր այն ժամանակ հայ գրողները հավաքույթներ էին ունենում: Տուն-թանգարանը նախագծված է այդ տան նման. միայն արտաքինը ես ձևավորեցի այլ կերպ, այսինքն՝ հայկական ճարտարագետության ոճով: Շուտով կավարտվեն շինարարական աշխատանքները և տուն-թանգարանը պատրաստ կլինի:

Մենք սեղմեցինք ճարտարագետի ձեռքը և ընկերոջս հետ խորհրդածելով, իջանք աստիճաններով:

(Արատուզված «Բրական բերք»ի 1950 թ. օգոստոսի 31-ի համարից)

## ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Երևանի Նոր Արեշ ավանի մոտ գտնվող Արինբերդում (Ղանլի թափա) ճարտարագետ Կ. Հովհաննիսյանը հայտնաբերել է ուրարտական երկու սեպագիր արձանագրություն: Ընթերցողներից պարզվեց հետևյալը: Երկու արձանագրությունների տեքստերն էլ շինարարական բովանդակություն ունեն: Արձանագրություններից մեկը (13 տող), որ ամբողջական է և հիանալի պահպանված, պատկանում է Արգիշտի 1-ինին (8-րդ դար մեր թվագրությունից առաջ): Նշվում է, որ Արգիշտին այնտեղ կառուցել է «Հոյակապ բերդ» և անվանել է Իրրունի (Մուրունի), պարսպապատել է (»), կառուցել է «Հզոր ձեռնարկություններ»: Տեքստի վերջում դրված է ուրարտական արձանագրությունների հատուկ արքայական տիտղոսաշար:

Երկրորդ արձանագրության քարը ջարդրված է և տեքստը թերի է, սակայն պահպանված մասը հնարավորություն է տալիս վերծանել այն ամբողջությամբ: Արձանագրության հեղինակն է Արգիշտի 1-ինի հարորդ՝ Սարգուր 2-րդը (8-րդ դար մ. թ. ա.),

որն ըստ երևույթին կառուցել է աշտարակ ("): Քարի վրա պահպանված է 9 տող, սակայն մեր կարծիքով պետք է եղած լինի 11 տող: Այս տեքստը ևս ավարտվում է տիտղոսաշարով:

Այս արձանագրություններն ունեն պիտակական կարևոր նշանակություն: Նրանք ցույց են տալիս, որ Ուրարտուն իրոք Արգիշտի 1-ինի ժամանակ եղել է մի հզոր պետություն՝ տարածված Վանից մինչև Սևան: Երևանը իր շրջակայքով և Արարատյան դաշտավայրը Ուրարտուի համար կազմել են երկրորդ հիմնական կենտրոնը: Արգիշտի 1-ինը ուրարտական բերդերի եռահանգույց շղթաներով պատել է իր տիրապետության տակ եղած տեղիտորիսի:

Մինչև օրս Արինբերդը հայտնի էր միայն Արգիշտի 1-ինի շրջատղանի մի արձանագրությունով, որը հաղորդում է աշտարակի (») կառուցման մասին: Նորագյուտ այս տեքստերը պարզում են, որ Արինբերդում Արգիշտին կառուցել է նաև (և անշուշտ առաջին հերթին) բերդ (բերդ բառաբանում է՝ ar-ն,